






0264-7/10 78



40.

8

Handwritten text at the bottom of the page, partially obscured and difficult to read, appearing to be a list or series of numbers/characters.

2011-07 6 NOV 2011

3008a

891.542-93

թ-89

ար

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈԻՄԱՆԵԱՆ

ՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

Հնդկական հեփաթ


(ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ)



1002
7069

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեֆրասպ. օր. Ն. Աղանեանցի, պոլիգ. 7.
1911



Ոսկի քաղաքը

Հնդկական հեքիաթ

1.



ուկով ժամանակով հարուստ
Հնդկաստանում տիրելիս է լի-
նում Ուքանա թագաւորը: Օ-
րերից մի օր մեռնում է նրա սի-
րելի կինը: Դժբախտ թագա-
ւորը չի կարողանում մխիթա-
րել ոչ մի բանով, իրեն որսոր-
դութեան է տալի: Մի անգամ էլ, երբ որսի է գլուս-
գալի, անտառում մի գեղեցիկ փոքրիկ աղջիկ է գըտ-
նում: Ուրախանում աշխարհքով մին է լինում, առ-
նում տուն է բերում, որդեգրում, անունը դնում Քա-

նաքարա, դառնում է տխուր թագաւորի միակ
մխիթարանքը:

2.



Մեծանում է Քանաքարան: Երբ հասնում է ամուսնութեան ժամանակը, թագաւորը հրաւիրում հաւաքում է իր երկրի երիտասարդ արքայազուներին ու իշխանազուներին, որ նրանց միջից ընտրութիւն անի Քանաքարան: Բայց աղջիկը դուրս չի գալի իր սենեակից:

—Հայրիկ, ասում է, գիշերս մօրս հոգին երազ եկաւ ինձ, ասաւ Քանաքարա, շատ շատերը կը խնդրեն քու ձեռքը, չը խաբւես ոչ գեղեցկութեան, ոչ քաջութեան, ոչ հարստութեան, որովհետեւ անբախտ կը լինիս որին էլ ընտրես քեզ ամուսին. ընտրի միայն նրան, ով իր կեանքում գոնէ մի անգամ եղած կըլինի Ոսկի քաղաքում:

—Շատ լաւ, աղջիկս, ասում է բարի ծերունին. իմաստուն են երազները ու մօրդ հոգին քու երջանկութեան համար է խօսում: Ես էտպէս էլ կը յայտնեմ հաւաքւած փեսացուներին, ինչպէս ազդել է երազը ու ինչպէս քու սիրտն է ուղղում: Նրանք աշխարհք տեսած մարդիկ են և անշուշտ

նրանց մէջ կը գտնւեն էնպէսները, որ իրենց կեանքում գոնէ մի անգամ եղած են Ոսկի քաղաքում:

Էտպէս էլ յայտնում է թագաւորը հաւաքւած արքայազուներին ու իշխանազուներին: Երբ Ոսկի քաղաքի անունը լսում են, ամենքը նայում են իրար երեսի ու զարմանքով վեր են քաշում իրենց ուսերը:

—Էդպէս քաղաք մենք չենք էլ լսել մեր օրում ուր թէ տեսել...

Նստում են ձիանքը ու իրար ետեւից հեռանում, ցրւում իրենց աշխարհքները:

3



Ուրանա թագաւորի քաղաքում մի երիտասարդ է լինում Դիւանա անունով: Մի շուայ, զւարճասէր երիտասարդ է լինում սա, խնջոյքներում ու քէֆերում վատնած իր կարողութիւնը, դատարկ, ձանձրացած կեանքից ու աշխարհքից: Հէնց որ թագաւորի աղջկայ որոշումը լսում է բացականչում է. —Այ բեգ լաւ դէպք աշխարհքում մի բիշ էլ զւարճանալու, և հարստանալու, և գեղեցիկ կին ունենալու: Եւ ինչպէս ոչորի մտքով չի անցել գնա ասի տեսել է Ոսկի քաղաքը ու ամուսնանայ հետը:

Վեր է կենում շիտակ գնում Ուբանա թագա-
ւորի պալատը:

—Յայտնեցէք չքնաղ Քանաքարային, որ ես,
երիտասարդ Դիւանաս, եղել եմ Ոսկի քաղաքում:

Ամբողջ պալատը թնդում է ցնծութիւնից. վեր-
ջապէս եկաւ սպասած հերոսը:

—Ներս համեցէք,—խնդրում են դրանիկները, ու
ներս են տանում երիտասարդին գեղեցիկ Քանա-
քարայի մօտ: Քանաքարան խնդրում է նրան, որ
պատմի, թէ ինչ բան է Ոսկի քաղաքը: Ու Դիւա-
նան սկսում իր սուտ պատմութիւնը:

—Ոսկի քաղաքը... էլ մի ասի, տիրուհի, թէ ինչ
զարմանալի բան է էտ Ոսկի քաղաքը, որ ես ընկայ
մէջը... Առնարական գործերով անցնում էի աշ-
խարհից աշխարհ, հազար ու մի աշխարհ ընկայ,
հազար ու մի քաղաք տեսայ հազար ու մի հրաշա-
լիքներով լիքը... Մի անգամ էլ, մի աշխարհում,
որի անունը լեզւիս ծէրին է և հիմի կասեմ որտեղ
որ է, տեսնեմ հեռում մի ահագին տարածութիւն
վառւում է արևի տակ, ինչպէս մի հսկայական
հրդեհ:

—Էս ինչ հրաշք է, հարցնում եմ ընկերներս:

—Ոսկի քաղաքն է, ասում են ինձ:

—Ճշմարիտ որ Ոսկի քաղաք... Մօտենում ենք,
ինչ տեսնենք, փողոցների սալայատակները ոսկի...
Մարդիկ էլ ոչ աշխատում են, ոչ չարչարում են,
նստած ուտում խմում են...

—Դուրս արէք էս անամօթ ստախօսին,—բար-
կացած կանչում է Քանաքարան: Վրին տալով դուրս
են անում երիտասարդ Դիւանային և պալատը նո-
րից ընկղմում է տխրութեան մէջ...



4.

Բայց էն օրւանից, ինչ երիտասարդ Դիւանան
տեսնում է գեղեցիկ Քանաքարային, սիրահարւում
փոխւում, գառնում է բոլորովին ուրիշ մարդ: Քու-
նը փախչում է նրա աչքերից, գիշեր ցերեկ միայն
էն է մտածում, որ գնան, գնան, գնան, գտնի Ոսկի քա-
ղաքը, ուր ուզում է լինի, ու գայ պատմի Քանա-
քարային: Ու թողնում է տուն ու տեղ, հէքն ու
մէք, ռրտեղ գլուխը փէշն է դնում քնում, ես Ոս-

կի քաղաք, քեզ եմ գալի: Գնում է, ամեն պատահողի հարց ու փորձ է անում, ոչով չի էլ լսել Ոսկի քաղաքի տնունը ուր մնաց թէ տեղն ասէր:

5.

Մի օր էլ Դիւանան յոգնած, տխուր անց է կենում մի խոր անտառով: Տեսնում է մի ծառի վրա նստած մի մեծ արծիւ: Նեան ու աղեղը պատրաստում է որ զարկի, մին էլ Աստծու հրամանով, արծիւը լեզու է առնում ասում.

— Ինչո՞ւ ես սպանում, ով բարի մարդ. առանց էն էլ վիրաւորւած եմ ես: Որսկանի նետը մտել է թևիս տակը, անտանելի ցաւ է տալի ու արիւնքամ է անում ինձ: Եթէ գթաս՝ նետը հանես ու առողջացնես ինձ, ես քեզ էն լաւութիւնը կանեմ, ինչ որ միայն արծիւը կարող է անել:

Զարմանում է երիտասարդ Դիւանան, թէ ինչպէս է անլեզու հաւքը խօսում մարդկային լեզով, ապա ուշաբերելով մօտ է գնում, զգոյշ ծառիցը վեր է բերում վիրաւոր արծիւին, նետը հանում է թևի տակից ու տանում անտառում մի խրճիթ, սկսում է բժշկել:

Արծիւը հէնց առողջանում է զիմում է Դիւանային:

— Ես խօսք տւի, որ քեզ էն լաւութիւնը կանեմ, ինչ որ միայն արծիւը կարող է անել: Խօսք եմ տւել ու խօսքս խօսք է, պէտք է կատարեմ ինչ

էլ որ սիրտդ ուզի, լեզուդ խօսի: Ասա տեսնեմ՝ ինչ ես ուզում:



Ու նստում է երիտասարդը պատմում արծիւին իր պատմութիւնը աղաչում, որ իրեն տանի Ոսկի քաղաքը, եթէ միայն գիտի, որտեղ է գտնւում նա:

— Դժար բան ուղեցիր. բայց արծիւի համար չի դժարը: Դու միայն ամուր կաց իմ մէջքին, դեռ ճրագները չը վառած քեզ վեր կը բերեմ Ոսկի քաղաքում

— ասում է արծիւը ու վեր թռցնում երիտասարդին:

Բաց է անում իր հսկայական թևերը, բարձրանում է մինչև ամպերը սլանում հեռու գէպի արևլուս: Երկիւղից ու արագութիւնից գրեթէ շնչասպառ է լինում, ուշրից գնում է Դիւանան: Մին էլ էնտեղ է ուշքի գալի, որ արծիւը ծղրտում է.

— Ահա Ոսկի քաղաքը, ու իջեցնում է գետին:

6.

Աչքը բաց է անում Դիւանան: Առջեր, կանաչ այգիների մէջ թաղւած, տարածւում է Ոսկի քաղաքը: Կապոյտ գետը ոլորւելով անցնում է նրա միջից: Հեռւից շատ ծանօթ քաղաքների նման մի քաղաք և էն էլ փոքրիկ քաղաք: Առաջ է գնում:

Չորս կողմը բարեւի այգիներ, զմրուխտ կանաչ,
հազարգունի ծաղիկներ: Օդը լիքն է թարմութիւ-
նով ու բուրմունքով, թռչունների ծըլւոցով ու ջը-
րերի կարկաչով, և նրանց հետ միախառնելով հըն-
չում են մարգերում ու այգիներում աշխատողնե-
րի երգերը:

- Ա՛խ, ի՞նչ լայն է աշխարհքն ազատ
էս կեանքի համար, ամենքի համար:
Ի՞նչքան լիքն է, ի՞նչքան առատ
էս կեանքի համար, ամենքի համար:
Ա՛խ, ի՞նչ լաւն է աշխատանքը,
Ասողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ անուշ է հոսում կեանքը
Լիքը սիրով, ծաղկով, երգով:
«Երջանիկ մարդիկ», մաածում է Դիւանան,
ու, երբ երգը լռում է, դիմում է նրանց:
— Ասացէք, աղաչում եմ, ով երջանիկ մարդիկ,
ի՞նչ է էս քաղաքի անունը:
— Ոսկի քաղաքն է սա, բարի ծտարական:
— Իսկ դուք ծառաներ էք, որ բանում էք ձեր
տէրերի այգիներում թէ՛...
— Մենք տէր ու ծառայ չգիտենք:
— Իսկ ձեզ ո՞վ է կառավարում:
— Գոհար թագուհին:
— Շատ զօրեղ թագուհի է երևի:
— Այո՛, նա գիտի երջանկացնելու գաղտնիքը:
— Արդեօք կարելի՞ է նրան տեսնել:

— Նրա դուռը բաց է ամենքի առջև, իսկ օտա-
րականներին միշտ նրա մօտ են տանում. և քեզ
էլ կը հրաւիրեն անշուշտ:

7.

Ճշմարիտ որ, ներս է մտնում քաղաքը թէ չէ,
Դիւանային խնդրում են Գոհար թագուհու ապա-
րանքը: Ապարանքում երբ կերակրում է, կազ-
դուրւում ու հանգստանում, հրաւիրում են թա-
գուհու մօտ: Թագուհին մի շատ բարի ու ազնիւ
կին է լինում և էնքան չքնաղ, որ հրեղէն-փարեղէն
մի արարած է թւում Դիւանա-
յին: Կախարդ, որ կախարդ, հէնց
մի տեսնելով կախարդում է նը-
րան:



— Ի՞նչ է քեզ բերել մեր աշ-
խարհքը, երիտասարդ օտարա-
կան, հարցմունք է անում Դի-
ւանային. — միշտն է քեզ հարց-
նում թէ՛ բախտն է առաջնոր-
դում, և ի՞նչով կարող ենք օգ-

տակար լինել քեզ:

Թագուհու ազնուութիւնից ու հարցմունքից ո-
գեւորւած, Դիւանան սրտաբաց պատմում է մի առ-
մի, թէ ով է ինքը, ինչ է եկել իր գլուխը ու ինչ-
պէս է հասել Ոսկի քաղաքը:

— Միշտ լաւ է, ասում է թագուհին, երբ մար-

զիկ թողնում են իրենց վատ սովորութիւններն ու կրքերը, լցւում են բարձր կարօտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի: Թէ կրհասեն,—լաւ, թէ չեն հասնի, դարձեալ՝ միշտ լաւ է ու լաւ, որովհետեւ կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձգտումն ու ճանապարհ:

—Իսկ երջանկութիւնը...

—Աշխատել լաւ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով:

—Ե՞տ է երջանկութիւնը:

—Ուրիշ ոչինչ:

—Իսկ ես կարծում էի, ձեր քաղաքը լիքն է ոսկով և նրանից է որ գոհ ու երջանիկ են ձեր մարդիկը, յայտնում է զարմացած Դիւանան:

—Ոսկի, քմծիծաղ է տալի Գոհար թագուհին. Ոսկին մետադ է, որ հողից է դուրս գալի, երջանկութիւնը զգացմունք է, որ սրտից է բլխում: Ի՞նչ կապ կայ նրանց մէջ:

—Իսկ ես կարծում էի, ահռելի բանակ ունէք և զէնքի ուժով էք պահպանում ձեր երկրի սքանչելի կարգն և խաղաղութիւնը, շարունակում է Դիւանան:

—Օ, երբեք: Ահն ու սպառնալիքը և խաղաղութիւնը իրար չեն տեսել և միասին չեն ապրում:

—Իսկ ես կարծում էի, թէ դուք հազարաւոր ոսկէգմբէթ տաճարներ ունէք, նրանց մէջ անդա-

դար աղօթում են ձեր հոգևոր հայրերը ու Աստուածը քաղցր են պահում ձեզ վրա:

—Ոչ, բարեկամ մենք, բնութեան ընդարձակութեան մէջ ենք պաշտում նրան և միջնորդներ չենք ճանաչում մեր հոգու ու նրա մէջ:

—Սքանչելի երկիր, բացականչում է Դիւանան. յիշում է իր հայրենի երկիրն ու ընկնում է մտքի տունը:

Ապա թէ տանում է կախարդ թագուհին, ման է ածում Դիւանային իր ապարանքի սրահները: Սրահներից մէկում Դիւանան տեսնում է պատիցը կախած մի աղջկայ պատկեր:

—Վահ, ինչքան նման է, բացականչում է ու մնում է առաջը բարացած:

—Ո՞ւմ նման է:

—Նրա...

—Ո՞վ է նա:

—Քանաքարան... իմ Քանաքարան...

—Բայց ով է Քանաքարան:

—Քանաքարան, թագուհի, հէնց էն աղջիկն է որի մասին քեզ պատմեցի: Նրա համար եմ ես հեռացել իմ հայրենի երկրից, ընկել աշխարհից աշխարհ ու արժւի թևով հասել Ոսկի քաղաքը և կրկին էլ պէտք է վերադառնամ նրա մօտ:

—Ի՞նչու ես վերադառնում, աղնիւ Դիւանա, խօսում է գեղեցիկ թագուհին: Մի վերադառնայ, Դիւանա, մնա մեզ մօտ, ապրի մեզ հետ: Մի՞թէ

աւելի փարթամ չէ Ոսկի բաղարը, միթէ հոյակապ չեն էս ապարանքները, միթէ հրաշալի չեն էս կախարդական այգիները...


—Ոչ, աննման թագուհի, չեմ կարող:

—Միթէ գեղեցիկ չեմ ես...

—Ոչ, չի լինելու որ չի լինելու: Էն ժամանակ թագուհին պատւիրում է, նաւ են պատրաստում, ու ճանապարհ է գնում Դիւանային դէպի իր հայրենի երկիրը, դէպի Քանաքարան:

8.

Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծութիւն է վեր կենում, նաւը ձգում է մի կողմի: Մի կանաչ կղզի լիքն ամեն բարիքով ու ամեն գեղեցկութիւնով: Բայց ամենից գեղեցիկը լինում է նրա ջահել



տիրուհին, որ Դիւանային առաջարկում է ամուս-

նանայ իր հետ, թագաւորի էն ազատ ու առատ աշխարհում:

—Ձեմ կարող, նազելի տիրուհի, հրաժարւում է Դիւանան: Ես դարձեալ իմ ճանապարհն եմ շարունակելու, ինչ ուզում է լինի—դէպի իմ հայրենի տունը, դէպի իմ Քանաքարան, որ չեմ փոխելու ոչ որի ոչ մի թագաւորութեան հետ:

Էս ասելու հետ հէնց աչքը ճպում է Դիւանան մին էլ բաց է անում,—կղզում տիրուհու փոխաբէն առաջը կանգնած է Գոհար թագուհին:

—Մի վախենար, Դիւանա, ու մի դարմանա, անուշ ժպտալով խօսում է նա: Տեսնում ես, Ոսկի բաղարի թագուհին եմ ես—կախարդ Գոհար: Իմ աղջիկն է Քանաքարան: Մանուկ հասակում Սեղեր նրան յափշտակեց ու տարաւ: Էն օրւանից ամեն եկւորի ինձ մօտ էի հրաւիրում, հարց ու փորձ էի անում, պատկերն էի ցոյց տալի, բայց ոչ ոք չէր իմանում թէ ուր է ընկել նա: Եւ ահա դու եկար նրա սիրով ոգևորւած ու վերադառնում ես կրկին նրա մօտ: Քո սէրը փորձելու համար էր որ ես բեզ արի էն ամեն առաջարկներն իմ քաղաքում: Եւ դարձեալ բեզ փորձելու համար էր, ես առայ ուրիշ կերպարանք, քեզ փորձելու համար ստեղծեցի էս փորձանքն ու էս վայելչութիւնները, որ լոկ երևոյթ են միայն: Այժմ ես հաւատում եմ քեզ, հաւատում եմ քո սէրն ու քո բարութեանը: Դու, յիրաւի, այժմ երջանիկ կանես և իմ Քանաքարային և ամեն մարդու:

էս խօսքի հետ մի փետուր է կրակում կա-
խարդ թագունին և, սև ամպի նման, յակնթաւոր թե-
ւերը փռած յայտնւում է մի մեծ արծիւ:

—Տար, բացականչում է կինը, ու ամեն «բան»
չբացնում Դիւանայի աչքից, այն ինչ օդի մէջ հըն-
չում է բնքոյշ երգը:

Գոհ աշխարհքից, գոհ իր կեանքից,
Սիմուրդ հաւքի զմրուխտ թևին,
Երջանկութեան հայրենիքից
Գնում է նա, գնում կրկին:

Գնում է նա վերածնւած
Մաքուր սիրով, բարի սրտով,
Դէպի երկիրն իր նախահարց—
Ցաւերի տուն, արցունքի ծով:


Տանում է նա ուժը ոգու,
Անվերջ սէրը, անհատ բարին,
Երջանկութիւնն ամեն մարդու,
Խաղաղութիւնն ողջ աշխարհին:

9.

Հոգու վրա է լինում Ուքանա թագաւորը, որ
Արծիւը ծղրտում ու վէր է գնում Դիւանային իր
հայրենի քաղաքի սահմանում: Քաղաքն է մտնում
Դիւանան ու գնում ուղիղ թագաւորի ապարանքը:

—Յայտնեցէք գեղեցիկ Քանաքարային, որ ես,
երիտասարդ Դիւանան, գալիս եմ Ոսկի քաղաքից:

Ընդունում են ներս: Դէմքը տեսնելուն պէ՝
Քանաքարան բարկանում է իր ծառաների վրա:



—Մի՞թէ չէք ճանաչում սրան, որ ներս էք թո-
ղել նորից: Մի՞թէ էն սրիկան չի սա, որ մի անգամ
փորձեց ինձ խաբի, և ահա նորից յանդգնում է,
ուզում է հին փորձը փորձի: Դուքս արէք իսկոյն:

—Սպասի, չընաղ Քանաքարա, խնդրում է Դի-
ւանան: Յիրաւի, ես նա էի, բայց էլ նա չեմ: Ես
այժմ Ոսկի քաղաքիցն ես գալի, բո կախարդ մօր—
Գոհար թագունու ապարանքիցն եմ վերադառնում,
բո մանկութեան ննջարանումն եմ եղել, ուր դեռ
կախ է արած քո սիրուն պատկերը...: Ես այժմ գի-


տեմ՝ ինչ բան է Ոսկի քաղաքը, ինչ է ոսկին և ինչ է երջանկութիւնը:—Եւ ամեն բան նստում պատմում է մի առ մի:



—Այժմ ես քոնն եմ, բացականչում է Քանաքարան, և աշխարհքով մին է լինում ու րախութիւնը: Ուքանա թագաւորն էլ շնչի է գալի. օխտն օր, օխտը զիշեր ամբողջ երկիրը կատարում է նըրանց հարսանիքը: Ամենքն ուրսխանում են ու լիանում: Էս ուրախութիւնը տեսնելուց յետոյ ծեր թագաւորն էլ հանգիստ աչրը փակում է, կեանքն ու արեւը բաշխում ապրողներին ու մեռնում: Նրա տեղը թագաւոր է նստում Դիւանան ու սկսում է իր երկիրը կառավարել էն կարգով, ինչ որ տեսել էր Ոսկի քաղաքում: Ոսկի չկար նրա երկրում, բայց մարդիկ ապրում էին աշխատանքով,

401
դոն ու երջանիկ ունեցածով: Եւ էն «Ժողովուրդը, որ մի ժամանակ տրտնջում էր, թէ աշխարհքը նեղ է, հիմա երգում էր:

Ի՞նչքան լալն է աշխարհքն ազատ
էս կեանքի համար, ամենքի համար.
Ի՞նչքան լիքն է, ի՞նչքան առատ
կարճ կեանքի համար, ամենքի համար:
Ինչ ազնիւ է աշխատանքը
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ թեթեւ է անցնում կեանքը
Լիքը սիրով, ուրախ երգով:



ՀՀ Ազգային գրադարան



NL0340259

9324

891.995

p-95